ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
<<ՎԵԴՈՒ ԾՆՆԴԱՏՈՒՆ>>
ՓԲԸ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРАРАТСКАЯ ОБЛАСТЬ
г.ВЕДИ
ВЕДИНСКИЙ РОДДОМ
ЗАО

ք. Վեդի, Գայի 1
N 52

234 2-16-23
ՀՎՀՀ 04104551

<< 20>> մայիսի 2014թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ -11/4» ծածկագրով շրջանակային
համաձայնագրերի միջոցով գնում կատարելու
ընթացակարգի հնարավոր մասնակիցների
ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ՎԾ-ՇՀԱՊՁԲ-14/04» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում **«Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ի** կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները:

<u>Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է հանդիսանում «ՎԾ-ՇՀԱՊՁԲ-14/04»</u>

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել **«**Վեդու ծննդատուն» ՓԲԸ, ք. Վեդի, Գայի 1, հաշվապահություն, մինչև 2014թ մայիսի 31-ը , ժամը 10:30-ը: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Գևորգ Ամիրջանյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում `ըստ ստացման հերթականության, ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն **«**Վեդու **ծննդատուն»** ՓԲԸ-ի շենքում, ք. Վեդի, Գայի 1 հասցեով, հաշվապահությունում, 2014թ. մայիսի 31-ին, ժամը 10:30-ին:

Գնման առարկա է հանդիսանում **«Վեդու ծննդատուն»** ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի և բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերումը:

**«Վեդու ծննդատուն»** ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի և պատվաստանյութերի մատակարարման (մատուցման, կատարման) (որոնք կազմված են 3.. չափաբաժիններից). տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանները ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի ամբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է հրավերի (ծանուցման) N1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N5). ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային հասցեն.

բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ–ՇՀԱՊՁԲ -11/4» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

*Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:*

Մասնակիցների կողմից որպես համարժեք ապրանքներ ներկայացնելու դեպքում գնային առաջարկում ներառել նաև դրանց տեխնիկական բնութագրերի նկարագրությունները .պարտադիր նշելով <<համարժեք>> բառը:

Հայտնում ենք որ.  հրավերով ներկայացվող դեղորայքի և Բժշկական նշանակության ապրանքների տեխնիկական բնութագրերի /քիմիական կազմի/հիման վրա Ձեր գնառաջարկում անհրաժեշտ է պարտադիր կերպով նեŕկայացնել հստակ այն դեղատեսակն /դեղորայքի անվանում, չափման միավոր, փաթեթավորում/ որը հաղթելու պարագայում կնշվի գնման պայմանագրում, և կմնա անփոփոխ պայմանագրի գործողության ողջ ընթացքում:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

«Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ _veducnndatun@mail.ru:

*Հարգանքով*

Տնօրեն՝ Վ. Մաթևոսյան

Կատարող՝ Գևորգ Ամիրջանյան

Գնումների համակարգող, հեռ.091-27-71-56